

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ՝ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍ-
ՏՈՍԻ 8-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ «ՊԱՐԵՆԱՅԻՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» 2007/019-124 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,
Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,
Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100
հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի հունիսի
13-ին՝ Բրյուսելում և 2008 թվականի օգոստոսի 8-ին Երևանում ստորագրված՝
Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի
միջև «Պարենային ապահովության ծրագիր» 2007/019-124 ֆինանսական համա-
ձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի
Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

Համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի հունիսի 13-ին՝ Բրյուսելում և 2008 թվականի օգոստոսի 8-ին՝ Երևանում: Համաձայնագրի նպատակը Եվրոպական համայնքի կողմից Հայաստան-2007. Պարենային անվտանգության ծրագրի (DCI-FOOD/2007/019-124) ֆինանսավորմանն աջակցելն է:

Ըստ համաձայնագրի՝ Ծրագրի բյուջեն կազմում է 3.086.000 եվրո, որից 86.000 եվրոն կօգտագործվի տեխնիկական աջակցության համար, իսկ առավելագույնը 3.000.000 եվրոն՝ բյուջետային օժանդակության համար: Եվրոպական համայնքի ֆինանսական օժանդակությունը պետք է սահմանափակվի համաձայնագրում նշված գումարով:

Համաձայնագրով նախատեսված Ծրագրի նպատակն է աջակցել աղքատության նվազեցման ուղղությամբ կառավարության և հասարակության ընդհանուր ջանքերին՝ կայուն տնտեսական աճի և զարգացման միջոցով, պահպանել և խթանել գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումները, հատկապես Եվրոպական հարևանության քաղաքականությանն անցնելու ընթացքում այդ ոլորտում պետական ծախսերի կառավարման բարելավումները, աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը բարելավելու համար գյուղատնտեսության ոլորտում պետական ծրագրերի և ծառայությունների մշակումը, կառավարումը, իրականացումն ու արդյունավետությունը, որոնք ուղղված են պարենային վտանգների նվազեցմանը, մասնավորապես, գյուղատնտեսության նախարարության իրավասությանը պատկանող

անասնաբուժության և բուսասանիտարական քաղաքականության շրջանակում ռեսուրսների բաշխման և գործառնական արդյունավետության բարելավմանը:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, այդ թվում.

- ապահովել հավասար պայմաններով մասնակցություն աշխատանքների, մատակարարման կամ ծառայությունների պայմանագրերի մրցառքային հրավերին և առաջարկների ներկայացմանը Եվրոպական համայնքի անդամ պետությունների բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, ինչպես նաև համագործակցության տվյալ ոլորտը կարգավորող հիմնական ակտերի հատուկ դրույթների համաձայն, շահառու երրորդ երկրների կամ այդ ակտերում հստակորեն նշված որևէ երրորդ երկրի բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար,

- Եվրոպական համայնքի կողմից ֆինանսավորվող գնումների պայմանագրերի և դրամաշնորհների նկատմամբ կիրառել ամենանպաստավոր այն հարկային և մաքսային պայմանները, որոնք կիրառվում են շահառու պետության հետ հարաբերություններ ունեցող պետությունների կամ զարգացման միջազգային կազմակերպությունների նկատմամբ,

- համապատասխան միջոցներ ձեռնարկել խախտումները, խարդախությունը կանխելու և, Եվրոպական համայնքների Հանձնաժողովի պահանջով, սխալմամբ վճարված դրամական միջոցները դատական կարգով վերադարձնելու ուղղությամբ,

- անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պայմանագրերի կամ դրամաշնորհների տրամադրման ցանկացած փուլում կամ դրանց առնչվող պայմանագրերի իրականացման ընթացքում ակտիվ կամ պասիվ կոռուպցիայի ցանկացած փորձ վերացնելու համար,

- թույլատրել, որպեսզի Եվրոպական համայնքների Հանձնաժողովը, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը և Աուդիտորների եվրոպական դատարանն իրականացնեն փաստաթղթային ստուգումներ և

ստուգումներ տեղում՝ համաձայնագրի տևողության ողջ ընթացքում և վերջին վճարումից հետո՝ յոթ տարվա ընթացքում և այլն:

Ծրագիրը պետք է իրականացվի համաձայնագրին և դրա անբաժանելի մասը հանդիսացող հավելվածներին՝ Ընդհանուր պայմաններին (հավելված I) և Տեխնիկական և վարչական դրույթներին (հավելված II) համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2008 թվականի հունիսի 13-ին՝ Բրյուսելում և 2008 թվականի օգոստոսի 8-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև «Պարենային ապահովության ծրագիր» 2007/019-124 ֆինանսական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 նոյեմբերի 2008 թվականի
ՄԴՈ-781